

**Հանրակրթական ուսումնական հաստատություններում  
գործնական աշխատանքների կազմակերպման  
առանձնահատկություններ**

*Էմինյան Գագիկ  
Կուրդինյան Սոնա*

*Հանգուցային բառեր. դպրոց, գործնական աշխատանք, կրթություն,  
ուսուցում, դասի պլան, գնահատում, սովորող, ուսուցիչ*

**Նախաբան**

Հանրակրթական ուսումնական հաստատություններում գործնական աշխատանքների կազմակերպման արդյունավետությանն ուղղված մանկավարժական նոր մոտեցումների բազմազանությունը խիստ պահանջված է մեր օրերում: Առարկայական չափորոշիչներով սահմանված են առարկաների գործնական աշխատանքների նշանակությունն ու կարևորությունը, առանձին դեպքերում նաև դրանց նվազագույն կամ առավելագույն քանակը: Գործնական աշխատանքների կարևորության նկատմամբ ուսուցիչների և սովորողների հետաքրքրությունը բավականին մեծ է: Առավել կարևոր են ոչ միայն գործնական աշխատանքների քանակը, այլև դրանց բովանդակությունը և սովորողների մոտ համապատասխան կարողությունների և հմտությունների ձևավորումը: Այսօր շատ դպրոցներում՝ հիմնական, միջնակարգ թե ավագ, գործնական աշխատանքների կազմակերպումը առավելագույնս իրականացվում է ուսուցիչների անհատական մոտեցումների շրջանակում, որտեղ գերակշռող մաս են կազմում ռեֆերատների, զեկուցումների, տեսասահիկների պատրաստումը և ներկայացումը: Իսկ որոշ ուսուցիչների մոտ կարծրացած այդպիսի մոտեցումը կարծես անբեկանելի սկզբունքի է վերածվել: Ուսումնական գործընթացում սովորողների ժամանակը ավելի արդյունավետ օգտագործելու նպատակով առաջարկում ենք համակցված դասերի սկզբունքով իրականացնել գործնական աշխատանքներ: Այդ նպատակով գնահատման մշակված մեխանիզմները և դասի պլանը, այդ գործընթացում ընդգրկված ուսուցիչների համագործակցությունը սովորողների աշխարհընկալման լայն հնարավորությունների պայման կարող է հանդիսանալ: Նպատակն է ուսումնասիրել հանրակրթական ուսումնական հաստատություններում գործնական աշխատանքների կազմակերպման առկա վիճակը, մշակել այդ գործընթացը ավելի արդյունավետ իրակա-

նացնելու այլընտրանքային մոտեցումներ: Այդ նպատակով կատարել ենք մասնագիտական գրականության ուսումնասիրություն, համակցված գործնական աշխատանքի պլանի մշակում, գնահատման մեխանիզմների մշակում և ներդրում, հասարակագիտական առարկաների ներուժի համալիր կիրառում: Հանրակրթական պետական չափորոշիչի հիմքի վրա ԿԳՄՍ նախարարի 2021 թվականի ապրիլի 30-ի հրամաններով հաստատվել են 2021-2022 ուսումնական տարվա առարկայական փորձնական չափորոշիչները և ծրագրերը, որտեղ առանձնակի ուշադրություն է դարձվում ինչպես գործնական, նախագծային աշխատանքների կազմակերպմանը, այնպես էլ միջառարկայական կապի պահպանման անհրաժեշտությանը [5]:

### **Համակցված գործնական աշխատանքների առանձնահատկությունները**

Մանկավարժության մեջ գործնական աշխատանքների կարևորությունը ընդգծվել է դեռևս անհիշելի ժամանակներից: Արիստոտելը, կարևորելով գիտելիքների գործնական կիրառությունը, իր պարզաբանումների մեջ, գրում է. «Գիտելիք ունեցող կարելի է համարել նրան, ով կարողանում է այն կիրառել» [4, 266]: Տեսականորեն գործնական մեթոդները ուսումնական գործընթացի կարևոր բաղադրիչ են: Գործնական աշխատանքի իրականացման ժամանակ է, որ ի հայտ է գալիս գործնական-կիրառական պակաս տեղեկատվություն, ինչը և հանգեցնում է որոշակի անորոշության. այս դեպքում ուսուցիչները և սովորողները ընտրում են ամենահստակն ու ամենահասանելին: Եվ հենց այդտեղ է, որ ուսումնական գործընթացում գործնական աշխատանքների քանակի ավելացումը դրանց արդյունավետության բարձր մակարդակ կամ ցանկալի արդյունք չի կարող ապահովել: Հանրակրթական ուսումնական հաստատություններում գործնական աշխատանքի հիմնական նպատակը սովորողների տեսական գիտելիքների վրա հիմնված ինքնուրույն, անհատական կամ թիմային աշխատանքն է: Կիրառելով գործնական մեթոդներ՝ սովորողը պլանավորում է առաջադրանքի կատարման ընթացքի հաջորդականության պահպանումը, ռազմավարությունների մշակումը, ինքնավերահսկողությունը, վերլուծությունների և եզրակացությունների կազմումը, կանխատեսելի արդյունքները, հնարավոր բացթողումների կամ սխալների հայտնաբերումը:

Բ. Տ. Լիխաչևը նշում է, որ «Գործնական ուսուցման պրոցեսի վերլուծությունը հանգեցնում է այն հետևությանը, որ գեղեցիկը տեսնելու, հասկանալու, ստեղծագործելու կարողության ձևավորումը զգալի չափով իրացվում է ուսուցման պրոցեսում» [2, 161-162]:

Գործնական աշխատանքի կազմակերպման համար հանրակրթական դպրոցի առարկաները լայն հնարավորությունների աղբյուր են, քիչ չեն նաև արտադասարանային, արտադպրոցական և ներդպրոցական հարթակները: «Ուսումնական աշխատանքը այն հիմնական բաղադրատարրն է, որը հնարավորություն է ընձեռում դպրոցականներին նախապատրաստել գործնական աշխատանքի և պատրաստակամ լինել աշխատելու իր ժողովրդի, իր հայրենիքի համար» [1, 365]:

Սակայն հարկ է նշել, որ գործնական աշխատանքների իրականացման տրամաբանությունը մեր դպրոցներում առավելապես խախտված է: Այդ են վկայում մեր կողմից իրականացված հարցումները:

Հանրակրթական ուսումնական հաստատություններում ուսուցիչների կողմից իրականացվող գործնական աշխատանքների վերաբերյալ մեր պատկերացումները ամբողջացնելու նպատակով իրականացրինք հարցում հանրակրթական տարբեր դպրոցներում (այդ թվում՝ հիմնական, միջնակարգ, ավագ, քաղաքային, խոշորացված գյուղական)՝ նախապես մշակված հարցաթերթիկի միջոցով: Հարցումներն իրականացվել են Վանաձորի թիվ 13 ավագ, թիվ 7 հիմնական, թիվ 24 միջնակարգ, թիվ 25 հիմնական, Գուգարքի ավագ դպրոցներում և ՎՊՀ-ի հենակետային վարժարանում: Հարցմանը մասնակցել են 70 ուսուցիչներ:

Հարցումներին մասնակցած ուսուցիչների աշխատանքային ստաժը 14-38 տարի էր: Նշված ուսուցիչները դասվարներ էին, պատմության, հասարակագիտության, ՀԵՊ-ի, հայրենագիտության, հանրահաշիվ-երկրաչափության, հայոց լեզվի և գրականության, քիմիայի, ֆիզիկայի, կենսաբանության, ինֆորմատիկայի, աշխարհագրության, ՆԶՊ-ի, կերպարվեստի, շախմատի և ռուսաց լեզվի ուսուցիչներ:

Հարցաթերթիկի այն հարցին, թե քանի գործնական աշխատանք են պլանավորում և իրականացնում մեկ կիսամյակի ընթացքում, հիմնականում պատասխանեցին՝ 3 աշխատանք:

Թե ինչպես են գնահատում գործնական աշխատանքները, նրանցից 90 % պատասխանեց՝ նիշային, 10 %՝ ուսուցանող և նիշային:

Հարցաթերթիկի այն հարցին, թե որքանով են կարևոր գործնական աշխատանքները ուսումնական գործընթացում, հարցվածներից 76 % պատասխանել է, որ կարևոր են, 21 % պատասխանել են, որ չափազանց կարևոր են, 3 %՝ կարևոր չեն:

Հարցին, թե ինչպիսի գործնական աշխատանքներ են հանձնարարում սովորողներին, ուսուցիչների 57 % պատասխանել են՝ ռեֆերատներ, 22 %՝ տեսասահիկներ, 14 %՝ աղյուսակներ, 7%՝ չափումներ և պատատոներ:

Հաջորդ հարցին՝ գործնական աշխատանքի ի՞նչ առավելություն (ներ) և թերություն (ներ) կնշեք, ուսուցիչները որպես թերություն նշել են ժամանակի պակասությունը, պարտադիր լինելը և ծնողների միջամտությունը, իսկ որպես առավելություն՝ գիտելիքի խթանումը, տեսանելի դիտարկումը, քննադատական, վերլուծական մտածողության, երևակայության զարգացումը, ինքնուրույն աշխատելու հմտությունը, տարածական մտածողության ընդլայնումը, գիտելիքի կիրառումը գործնականում, ստեղծագործական կարողությունների ձևավորումը, մրցակցության խթանումը:

«Եթե չկան պարտադիր գործնական աշխատանքի թեմաներ, ապա ինչպե՞ս եք ընտրում թեման» հարցին ուսուցիչների 7 % պատասխանել է՝ սեփական նախաձեռնությամբ, 13 %՝ ուսուցիչների հետ քննարկման արդյունքում, 7 %՝ մեթոդիավորման նիստին քննարկելուց հետո, 7 % էլ՝ սովորողների հետ քննարկելուց հետո:

Իսկ ահա այն հարցին, թե արդյոք իրականացրել եք գործնական աշխատանք մեկ այլ առարկայի ուսուցչի հետ համատեղ, հարցվածների 93 % պատասխանել են՝ ո՛չ, 7 %՝ այո՛:

Հարցումներից ակնհայտ է դառնում, որ ուսուցիչների մեծ մասը կարևորում է գործնական աշխատանքի դերը, սակայն նշում է, որ գործնական աշխատանքին հատկացված ժամերի քանակը քիչ է: Ակներև է նաև այն, որ գրեթե ոչ մի ուսուցիչ համակցված գործնական աշխատանք չի փորձել, գործնական աշխատանքի թեմաներն էլ ընտրել են սեփական նախաձեռնությամբ, գնահատումը կատարել հիմնականում նիշային:

Տարբեր առարկաներից համակցված գործնական աշխատանքների կազմակերպումը իր նշանակությամբ առանձնակի կարևորություն ունի ավագ դպրոցների ուսումնադաստիարակչական աշխատանքների գործընթացը լավագույնս իրականացնելու համար: Սովորողների աշխարհաճանաչողության ընդլայնմանը զուգահեռ մեծանում են նրանց վերլուծական կարողությունների և տրամաբանական եզրահանգումներ կատարելու ունակությունները, ինչը և դրական խթան կարող է լինել այդ աշխատանքները կազմակերպելու համար: Այն իր հետ բերում է նաև ինքնաճանաչման, ինչպես նաև ինքնավերլուծման ունակության ձևավորում: Նման դեպքերում սովորողների կատարած աշխատանքը՝ լինի նախագծային, վերլուծական, հետազոտական, որոնողական, ճանաչողական, լայնացնում է սովորողների մտահորիզոնը, հնարավորություն ստեղծում աշխատելու ուրիշների հետ՝ նպաստելով և թիմային աշխատանքի ձևա-

վորմանն ու ամրապնդմանը, և անհատական պատասխանատվության և կարգապահության գիտակցմանը:

Տարբեր կարծիքների, դիրքորոշումների քննարկումը, դրանց վերաբերյալ կատարված վերլուծությունները և եզրահանգումները ուսման որակի բարելավման պայման կարող են հանդիսանալ: «Աշխատանքը չի կարող հասարակացնել որպես դասերի ժամանակ ձեռք բերած գիտելիքների գործնական ամրապնդում և գործնական ստուգում: Այդ կապը պետք է վերաճի առավել խոր և նուրբ պրոբլեմի՝ մտավոր զարգացում-աշխատանք, միտք-աշխատանք» [3, 328]:

Անշուշտ, այս պարագայում որոշիչ է նաև ուսուցչի(ների) դերը: Պետք է նշենք, որ ավագ դպրոցի սովորողների մեծ մասը ծանոթ չէ կամ երբևէ չի մասնակցել կամ իրականացրել նման գործնական աշխատանքներ, ուստի և ուսուցչի (ների) անմիջական գործուն ներդրումից են կախված սովորողների հաջողությունները: Այս խնդրի լուծումը թերևս գործնական աշխատանքների կազմակերպման գործընթացի վերաբերյալ ուսուցիչների միասնական պահանջի պարզաբանումների գործընթաց է, որը նպատակահարմար է իրականացնել օգոստոս-հոկտեմբեր ամիսներին: Մեր պատկերացմամբ գործնական աշխատանքների կազմակերպման համար սովորողներին պետք է տրվի ոչ պակաս, քան 40 օրացուցային օր ժամանակ՝ հաշվի առնելով սովորողների ծանրաբեռնվածությունը: Քանի որ նման ծավալով աշխատանքի համար արդար չէ սովորողին նշանակել մեկ գնահատական, ուստի և մենք առաջարկում ենք խնդրի լուծումը գտնել համակցված գործնական աշխատանքների միջոցով: Այսինքն՝ սովորողները, օրինակ, կարող են ունենալ գործնական աշխատանք Հժպ, հասարակագիտություն և հայոց եկեղեցու պատմություն առարկաներից և ներկայացնեն մեկ աշխատանք, որտեղ կարտացույցվեն վերոնշյալ առարկաների միջև եղած կապը և համապատասխան նյութը: Արդյունքում սովորողը (ները) կարող է այդ աշխատանքի արդյունքում ունենալ գործնական աշխատանքի գնահատականներ չորս առարկաներից: Սա ևս լրացուցիչ խթան կհանդիսանա համակցված գործնական աշխատանքների իրականացման համար:

Նախևառաջ անհրաժեշտ է ընտրել գործնական աշխատանքի թեման, նպատակը, գնահատման ձևերը և առանձնահատկությունները (անհատական, թիմային, զույգերով), հստակ ձևակերպել գործնական աշխատանքի կազմակերպման գործընթացը, նշել առանձին աղբյուրները, մինչ գործնական աշխատանքի ավարտը հնարավոր (անհրաժեշտ) լրացուցիչ խորհրդատվությունների ժամանակացույցը (տարբեր առար-

կաների ուսուցիչների հետ համատեղ): Կարևոր են նաև գործնական աշխատանքների գնահատման օբյեկտիվությունը և գնահատման ձևերն ու մեթոդները: Այդ աշխատանքների գնահատման համար առաջարկում ենք կողմնորոշող տարբերակ:

### **Գործնական աշխատանքների հանրային գնահատում**

Գերազանց՝ 86-ից (ներառյալ) 100 միավորներ հավաքած սովորողների (թիմային, զույգերով և անհատական) աշխատանքների ներկայացում թիմ մենեջերի տեսքով, որին իրենց պարտադիր մասնակցությունն ունենան ոչ միայն սովյալ առարկայի (առարկաների) ուսուցիչները, այլև դասղեկը, մ/մ նախագահները, տնօրենի տեղակալները, աշակերտական խորհրդի նախագահը, սովորողների ծնողները և ԴԱԿ-ը (ուսուցչի օգնականը, հոգեբանը, սոցիալական մանկավարժը, շահագրգիռ այլ անձինք): Լավագույն աշխատանքների ներկայացման վերաբերյալ կարելի է պատրաստել տեսասահիկ, որի միջոցով այդ ամենը հնարավոր կլինի լուսաբանել նաև համացանցում: Աշխորհրդի, մանկավարժական խորհրդի, մեթոդմիավորման նիստերում քննարկումների արդյունքում լավագույն գործնական աշխատանքի հեղինակներին ներկայացնել խրախուսման: Այս ամենի արդյունքում կմեծանան ոչ միայն սովորողների մոտիվացիան, այլև սովորողների կարողությունները: Կրթաբեղավվեն սովորողների հաղորդակցման կարողությունները, անհատական և թիմային կարգապահությունը և պատասխանատվությունը: Համակցված գործնական աշխատանքների կազմակերպման արդյունավետությունը, անշուշտ, սովորողների մտահորիզոնի ընդլայնման լավագույն միջոցներից մեկը կհանդիսանա, ինչի արդյունքում ձեռք կբերեն ոչ միայն գիտելիքներ, հմտություններ և կարողություններ, այլև սեփական փորձը կփոխանցեն մյուսներին:

### **Գործնական աշխատանքների գնահատման սանդղակ**

1. Թեմայի արդիականությունը 1-10
2. Ներկայացված նյութի համապատասխանությունը թեմային 1-5
3. Խնդրի (ների) քննարկման մակարդակները 1-10
4. Օգտագործված գրականության(աղբյուրների) քանակը և համապատասխանությունը 1-5
5. Ներկայացված վերլուծությունների հավաստիությունը 1-20
6. Կատարված եզրահանգումների արժեքանական հիմքը 1-20
7. Աշխատանքի ներկայացման ծավալը, որակը, ձևը 1-20
8. Հետազոտության մակարդակը 1-10

*ընդ.՝ 100*

**Գործնական աշխատանքների գնահատման սանդղակ  
(թիմային և գույգերով)**

1. Թեմայի արդիականությունը 1-4
2. Համատեղ աշխատանքի ծավալը (ըստ յուրաքանչյուրի աշխատանքի) 1-5
3. Ներկայացված նյութի համապատասխանությունը թեմային 1-5
4. Խնդրի (ների) քննարկման մակարդակները 1-15
5. Ներկայացված վերլուծությունների հավաստիությունը 1-10
6. Օգտագործած սկզբնաղբյուրները (երկուսի կամ թիմի բոլոր անդամների համար) 1
7. Ներկայացված վերլուծությունների հավաստիությունը 5-20
8. Հետազոտության մակարդակը 5-20
9. Աշխատանքի ներկայացման ծավալը, որակը, ձևը 1-20

*ընդ.՝ 100*

Սովորողին (ներին) առավելագույն միավորներ կարելի է տալ այն դեպքում, երբ աշխատանքը ցույց է տալիս, որ նա հասկացել է թեման, կարողանում է առանձնացնել հիմնական հարցերը և հիմնախնդիրները, որոնք բխում են ուսումնական նյութից, ճշգրիտ են, դրանցում ակնառու երևում են ինտեգրված գիտելիքը և բարձր կարգի մտածողության կարողություններն ու հմտությունները: Այդ գիտելիքի կիրառումը ցույց է տալիս, որ սովորողը կարողանում է գրագետ շարադրել սեփական մտքերը, բերված են համոզիչ փաստարկներ, տարբեր աղբյուրներից ունեցած տեղեկությունները համադրվել են՝ կոնկրետ խնդիրների լուծումներ գտնելու համար, առաջադրվել է դասակարգման ինքնուրույն սխեմա, բացահայտված են փաստերի, երևույթների և գործընթացների միջև եղած բոլոր պատճառահետևանքային կապերը, պատասխանել է բոլոր հարցերին, և առաջադրանքները հավասարապես են նկարագրված, պնդումները հիմնավորած ու պատճառաբանված են մի շարք ապացույցների միջոցով, կատարվել են համարժեք և հիմնավորված եզրահանգումներ: «Բանն այն է, որ գործնական ուսուցումը միշտ էլ լուծում է կոմպլեքս խնդիրներ՝ հմտությունների ձևավորում, ընդունակությունների, հուզական ոլորտի և անհատականության զարգացում, գեղարվեստական ճաշակի դաստիարակություն» [2, 161]:

Ստորև ներկայացնում ենք համակցված գործնական աշխատանքի կազմակերպման մեր կողմից մշակված դասի պլանի օրինակ: Դասն անց ենք կացրել ՀՀ ԿԳՄՄ նախարարության Լոռու մարզի Վանաձորի Ս.

Նախընթացի անվան թիվ 13 ավագ դպրոցում:

Դասարան՝ 11-րդ:

Առարկաներ՝ հայոց պատմություն, հասարակագիտություն, հայ գրականություն, աշխարհագրություն:

Թեմա՝ 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը:

Դասի տիպը՝ գործնական աշխատանք:

Նպատակը՝

- Պարզաբանել պատերազմի էությունը, առանձնացնել միջազգային վեճերի տարբեր տեսակներ, համեմատել դրանց լուծման խաղաղ և ոչ խաղաղ մեթոդների ուժեղ և թույլ կողմերը:
- Իմանալ ռուս-թուրքական պատերազմի պատճառների, ռազմական գործողությունների ընթացքի, արդյունքների մասին:
- Ներկայացնել հայերի մասնակցությունը՝ բերելով փաստեր:
- Հիմնավորել աշխարհագրական առավել նպաստավոր դիրքի հարմարավետությունը և ռելիեֆով պայմանավորված տեղաշարժերը:
- Ներկայացնել Բաքոյի «Խենթեր» ստեղծագործության բովանդակությունը և գուգահեռներ տանել պատմական իրողության հետ:

Խնդիրները՝

- Սովորողների մոտ զարգացնել հետազոտական, վերլուծական մտածողություն:
- Նպաստել «միջառարկայական ժամադրության» հմտության ձևավորմանը:
- Ձևավորել պատասխանատվության զգացում թիմային (գույգերով) աշխատանքում:
- Ընդլայնել համագործակցության կարողությունները:

Անհրաժեշտ պարագաներ՝ քարտեզ՝ 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը, համակարգիչ, լուսածրիչ:

Դասի տևողությունը՝ 2 դասաժամ:

Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ պարբերաբար տարբեր մեթոդավորման նիստերում քննարկում ենք մանկավարժամեթոդական հարցեր, որոնց թվում էր նաև համակցված գործնական աշխատանքների հարցը, հաշվի է առնվել որոշ թեմաների՝ տարբեր առարկաներից համաժամանակյա ուսումնասիրելու կարևորությունը, ինչը և արձանագրվել է: Դա հնարավորինս դյուրին է դարձնում որևէ երկու դասաժամի գործնական աշխատանքի կազմակերպումը՝ կախված դասացուցակից: Այսինքն՝ էական չէ, թե նախապես պլանավորված համակցված



գործնական աշխատանքը, որ առարկայի դասաժամին կանցկացվի:

Դասի ընթացքը

Կազմակերպչական մաս - սովորողների հաշվառում, աշխատատեղերի նախապատրաստում, ուսումնական մթնոլորտի ստեղծում:

Սովորողներին գործնական աշխատանքի մասին տեղեկացվել էր 30-40 օր շուտ, առաջարկվել էր թեմաների ցանկ այնպես, որ հնարավոր լիներ համակցել մի քանի առարկաներ, ապա իրենց կողմից ևս թեմաներ էին առաջ քաշվել. արդյունքում կանգ առանք իրենց նախընտրած թեմայի վրա: Նախօրոք վիճակահանությամբ կազմել էինք երեքհոգանոց խմբեր, արդյունքում՝ հինգ խումբ, ընդ որում յուրաքանչյուրն ուներ իր ավագը: Այդ օրերի ընթացքում աշակերտները համագործակցել են բոլոր առարկաների ուսուցիչների հետ՝ ըստ նախօրոք կազմված ժամանակացույցի: Համագործակցել են նաև ուսուցիչները՝ ուղղորդելով խորհուրդներով և դիտարկումներով: Առերես հանդիպումները պարտադիր չէին, քանի որ սոցիալաթակները հնարավորություն էին տալիս կապ հաստատելու նաև հեռավար:

Ուսուցիչներս, միմյանց հետ համագործակցելով, սովորողների համար նախապես կազմել էինք հարցերի շրջանակ, որոնց շուրջ պիտի աշխատեին և ուսումնասիրություններ կատարեին խմբերը: Ստորև ներկայացնում ենք այդ գործնական աշխատանքի նպատակներից բխող խնդիրների լուծման կարևոր շեշտադրումները.

1. Վեր հանել պատերազմների պատճառները:
2. Ուսումնասիրել պատերազմին վերաբերող միջազգային կոնվենցիաները:
3. Ուսումնասիրել ռուս-թուրքական պատերազմի պատճառները, ընթացքը, արդյունքները:
4. Պարզաբանել հայերի մասնակցությունը:
5. Ուսումնասիրել տվյալ տարածաշրջանի ռեյլեֆի ձևերը, լեռները, գետերը, միջլեռնային գոգավորությունները:
6. Ուսումնասիրել պատերազմող երկրների սահմանները, տեղանքում կողմնորոշվելու մեթոդները:
7. Ուսումնասիրել ԲաՖՖու ռոմանտիզմի արտահայտությունը Վարդանի երազում:
8. Պարզաբանել՝ ինչն է իրականություն դարձել, և ինչն է երազանք նաև մեզ համար:

Դասին ներկա էին վերոնշյալ առարկաները դասավանդող ուսուցիչ-

ները, փոխտնօրենները, մ/մ նախագահները, ԴԱԿ-ը, աշխտհրդի նախագահը, անդամները և այլք: Օրինակ՝ ԴԱԿ-ն իր աշխատանքային պլանով սահմանված խնդիրների շրջանակում հնարավորություն է ունենում ուսումնասիրելու, բացահայտելու սովորողների խոսքի կուլտուրան, սեռատարիքային առանձնահատկություններից բխող դրսևորումները, նրանց թույլ և ուժեղ կողմերը: Աշխտհրդի նախագահի, անդամների և առհասարակ յուրաքանչյուր սովորողի համար նմանօրինակ դասերին ներկա գտնվելը նրանց համար ուսանելի և օրինակելի կարող է լինել:

Դասն սկսվելուն պես ուսուցիչներից մեկը նախ ներկայացրեց դասի գործնական աշխատանքի թեման, նպատակը, համակցված գործնական աշխատանքի էությունը, գնահատման չափանիշները (գործնական աշխատանքների գնահատման մեր առաջարկած հանրային գնահատման տարբերակով)՝ 5 րոպե:

Յուրաքանչյուր խմբի աշխատանքը ներկայացնելու համար տրամադրվեց 15 րոպե: Այնուհետև խմբերը սկսեցին ներկայացնել իրենց պատրաստած աշխատանքները՝ առաջին խումբը՝ տեսասահիկ, երկրորդը՝ տեսահոլովակ, երրորդը՝ պաստառ, չորրորդը՝ մակետ և հինգերորդ խումբը՝ փոքրիկ ֆիլմ, որտեղ, ըստ նախնական պայմանավորվածության, պարզաբանվեց թեման բոլոր նշված 4 առարկաների մասով՝ փոխկապակցելով տարբեր փաստերը: Օրինակ՝ բավականին հետաքրքիր աշխատանք էր սովորողների կողմից նախապես պատրաստած տարածաշրջանի մակետը, որի վրա նրանք ցույց տվին երկրների սահմանները, գետերը, լճերը, ռազմական գործողությունների համար առավել նպաստավոր ռելիեֆը, ապա ներկայացրին պատերազմների պատճառները և հետևանքները՝ իրենց հետաքրքիր լուծումներով, զորքերի դասավորվածությունը կոնկրետ Բայազետի պաշտպանության ժամանակ, առանձնացրել էին Վարդանի կերպարը... Մյուս խմբերը իրենց աշխատանքները ներկայացրին համակարգչի, լուսածրիչի միջոցով: Կարևոր էր նաև, որ մի խումբը մյուսից բավականին նոր բան սովորեց թե՛ գիտական, թե՛ թիմային աշխատանքի և թե՛ պատասխանատվության տեսանկյունից: Հետաքրքիր էր նաև այն, որ ուսումնասիրվող թեման որոշ առարկաների մասով տարբեր ժամանակ են անցնում, հետևաբար ապագայի համար արդեն իսկ գիտելիքի պաշար ձեռք բերեցին: Եղան նաև հարց ու պատասխաններ, քննարկումներ: Վերջում ուսուցիչները, հաշվի առնելով առաջադրված խնդիրներից բխող հարցերի ուսումնասիրության աստիճանը, ամփոփեցին, վերլուծեցին յուրաքանչյուր խմբի աշխատանքը, պատաս-

խանները և հիմնավորեցին գնահատումը, մասնավորապես, թե ինչ խորությամբ էր ուսումնասիրվել հիմնահարցն ըստ առարկաների (10 ըուպե): Փաստորեն, սովորողները մեկ համալիր և բովանդակալից աշխատանքի արդյունքում գնահատվեցին չորս առարկաներից:

### **Եզրակացություն**

Այսպիսով, հանրակրթական ուսումնական հաստատություններում առանձին և տարբեր առարկաներից համակցված գործնական աշխատանքների առավել արդյունավետ կազմակերպման և գնահատման արդյունքում կարող ենք ունենալ ավելի լավ, դրական ձեռքբերում սովորողների մտահորիզոնի ընդլայնման և ուսման բովանդակության խորացման գործում: Գործնական աշխատանքների հանրային գնահատման բաղադրիչը կմեծացնի ոչ միայն սովորողների հետաքրքրության խթանման մակարդակը, այլև լրացուցիչ ազդակ կհանդիսանա ուսումնառության մեջ ընդգրկված մասնակիցների՝ սովորող, ուսուցիչ, ծնող, միասնական պահանջների պահպանմանը: Ուսուցիչ-աշակերտ համագործակցության մակարդակի ընդլայնումը, սովորողների ինքնաճանաչման և ինքնադրսևորման հնարավորությունները լավ օրինակ կարող են հանդիսանալ ավելի ցածր դասարանների սովորողների համար:

### **Գրականություն**

1. Ամիրջանյան Յու. Ա., Սահակյան Ա. Ս., Մանկավարժություն, «ՄԱՆԿԱՎԱՐԺ 2005» հրատարակչություն, 456 էջ:
2. Լիխաչև Բ. Տ., Դաստիարակության էսթետիկա, Երևան, «Լույս», 1973, 197 էջ:
3. Սուխոմլինսկի Վ. Ա., Քաղաքացու ծնունդը, Երևան, «Լույս», 1978, 345 էջ:
4. Апресян Р. Г, Гусейнов А. А., Этика Москва, «Гардарики», 2000, с. 472.
5. <https://escs.am/am/search?q=%D5%B9%D5%A1%D6%83%D5%B8%D6%80%D5%B8%D5%B7%D5%AB%D5%B9&page=2>

## Некоторые особенности организации практической работы в общеобразовательных учреждениях

*Эминян Гагик  
Кургинян Сона*

### Резюме

**Ключевые слова:** школа, практическая работа, образование, обучение, план урока, оценивание, ученик, учитель

В статье говорится о необходимости организации практической работы в образовательных учреждениях, а также о целях, формах, процессе и механизме оценивания.

Предложенные в данном контексте формы практической работы, критерии оценивания, особенности организации индивидуально-групповой работы, направлены на приобретение студентами знаний, соответствующих навыков и умений.

В ряде общеобразовательных учреждений были проведены опросы, подробный анализ которых делает наши выводы достоверными. В статье также говорится об обеспечении разнообразия способов и особенностей организации практической работы.

Эффективность совместной практической работы, справедливое оценивание и соблюдение общих требований будут очень сильным импульсом в этом очень важном образовательном процессе. Большое значение придается сотрудничеству учителей, преподающих разные предметы, что обеспечивает межпредметную связь, расширяет кругозор учащихся, умение выявлять сходство и различие между предметами и явлениями, анализировать и выявлять причинно-следственные связи.

В статье обращено внимание на укрепление и развитие связи учителя, ученика и родителей как участников образовательного процесса, при выборе темы следует учитывать предпочтения и интересы ученика. В статье рассматривается введение символически-общественной системы оценивания практических работ, необходимость поощрения обучающихся по результатам подведения итогов практических работ, а также необходимость индивидуально-командного оценивания. Представлен подробный план практического занятия, в котором отражена цель занятия, задачи, процесс, механизмы оценивания и т.д. Статья предназначена для поддержки учителей средних и старших классов, чтобы подчеркнуть идею применения теоретических знаний с помощью практических работ.

## Some Peculiarities of Organizing Practical Work in Public Educational Institutions

*Eminyan Gagik  
Kurginyan Sona*

### Summary

**Key words:** *school, practical work, education, teaching, lesson plan, assessment, student, teacher*

The article reflects the need to organize practical work, its goal, forms, process and assessment mechanisms in public educational institutions. The forms of practical work offered in this context, the assessment criteria, the peculiarities of organizing individual and group work are aimed at mastering knowledge and acquisition of the relevant skills and abilities by learners.

Surveys were conducted in a number of public educational institutions, a detailed analysis of which supports our conclusions. The article also discusses anticipation of a variety of ways and peculiarities of organizing practical work.

The effectiveness of the integrated practical work, the fair assessment and the maintenance of the common requirements will be a very strong stimulus in this very important educational process. We have emphasized the cooperation of teachers, which provides interdisciplinary communication, broadens the horizons of students, the ability to identify similarities and differences between objects and phenomena, analyze and identify cause-and-effect relationships. The article draws attention to the strengthening and developing teacher-student-parent connection; while choosing a topic, the students' preferences and interests should be taken into consideration.

The article discusses the introduction of mark and public system for assessing practical work; the need for nominating a student after summarizing practical work, and also the need for individual and group assessment. A detailed plan of an integrated practical work has been presented with its purpose, tasks, process and assessment mechanisms, etc.

This article is intended to support secondary and high school teachers to emphasize the idea of applying theoretical knowledge through practical work.

Ներկայացվել է 12.04.2022 թ.

Գրախոսվել է 11.05.2022 թ.

Ընդունվել է սպագրություն 25.11.2022 թ.